ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 131 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վարուժան Վահանյան Վաչագանի» ԱՁ-ի (ՀՎՀՀ՝ 26578594) և «Արտկոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00403814) 2024 թվականի հունվարի 31-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից ներքին հարդարման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 80,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վարուժան Վահանյան Վաչագանի» ԱՁ-ի (ՀՎՀՀ՝ 26578594) և «Արտկոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00403814) 2024 թվականի հունվարի 31-ին կնքված եռակողմ

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արտկոն» ՓԲԸ-ի կողմից ներքին հարդարման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 480,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մայք Տրանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02530772) 2024 թվականի հունվարի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 9-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրանսպորտային, սուրհանդակային ծառայությունների մատուցում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ